**«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ**
**Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ**

# Ֆինանսական հաշվետվություններ

*2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

# Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

**Ֆինանսական հաշվետվություններ**

Հաշվապահական հաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2022 թ. 1
Արտահաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2022 թ. 3
Եկամուտների և ծախսերի հաշվետվություն 2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 4

**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

1. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները 5
2. Զուտ ակտիվներում փոփոխություններ տարվա համար 9
3. Լրացուցիչ մանրամասներ 10
3.1 ֆինանսական գործիքների ներկայացումը՝ ըստ իրավական կամ առևտրային տեսակի 10
3.2 ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումը՝ ըստ տոկոսի տեսակի 10
3.3 ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումը՝ ըստ ժամկետայնության 11
3.4 ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումը՝ ըստ ցուցակման կամ գնահատման արժույթի 11
3.5 դեբիտորական և կրեդիտորական պարտքի ներկայացումը՝ ըստ տեսակի 12
3.6 բաժնետերերի ֆոնդեր 12
3.7 կառավարման վճարներ 12
3.8 ստանձնած և տրամադրված պարտավորություններ 12
3.9 այլ 12
3.10 բաշխման ենթակա միջոցների հատկացման աղյուսակ 13
3.11 շահույթի (վնասի) և այլ բնորոշ հատկանիշների ներկայացման աղյուսակ՝ վերջին հինգ ֆինանսական ժամանակաշրջանների համար 14
3.12 պորտֆելի ցուցակումը 15

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի Տնօրենների Խորհրդին

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդի) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, արտաբալանսային հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունները ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆոնդի ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները՝ Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

***Կարծիքի հիմքեր***

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք)), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Այլ հանգամանք***

Ֆոնդի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի Ապրիլի 15-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

***Ղեկավարության և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ֆոնդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Տնօրենների Խորհուրդը պատասխանատու է Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

EY

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ֆոնդի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» «ERNST & YOUNG» 00057741

Պատասխանատու աուդիտոր՝ Ելենա Ադամյան

19 ապրիլի, 2023թ.

**Հաշվապահական հաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2022 թ.**

| *ՀՀ դրամով* | Ակտիվներ<br>2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | <br>2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Հիմնական միջոցներ, զուտ** | **0.00** | **0.00** |
| **Ավանդներ** | **1,132,746,246.58** | **965,001,438.36** |
| **Ֆինանսական գործիքներ** | **2,877,417,085.27** | **2,680,648,649.85** |
| **Բաժնետոմսեր և համանման արժեթղթեր** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| Կարգավորրող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| **Պարտատոմսեր և համանման արժեթղթեր** | **1,681,023,532.90** | **1,401,013,134.97** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող պարտատոմսեր կամ համանման արժեթղթեր | 1,681,023,532.90 | 1,401,013,134.97 |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող պարտատոմսեր կամ համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| **Վարկային գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման գործիքներ | 0.00 | 0.00 |
| *Պայմանագրային վարկային գործիքներ (արժեկտրոններ)* | 0.00 | 0.00 |
| *Այլ վարկային գործիքներ* | 0.00 | 0.00 |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման գործիքներ | 0.00 | 0.00 |
| **Հավաքական ներդրումային գործիքներ** | **1,195,996,877.72** | **1,279,635,514.88** |
| Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումային գործիքներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր և դրանց համարժեքներ այլ երկրներում | 645,378,561.55 | 581,890,271.50 |
| Ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում | 0.00 | 0.00 |
| Ընդհանուր նշանակության պրոֆեսիոնալ ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում և ցուցակված արժեթղթավորման կազմակերպություններ | 0.00 | 0.00 |
| Այլ պրոֆեսիոնալ ներդրումային ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ անդամ այլ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ | 6,647,019.39 | 3,150,625.82 |
| Այլ ոչ եվրոպական կազմակերպություններ | 543,971,296.78 | 694,594,617.56 |
| **Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով** | **0.00** | **0.00** |
| Վարկեր՝ հետվաճառքի գործարքների ներքո պահվող արժեթղթերի համար | 0.00 | 0.00 |
| Վարկեր՝ փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց | 0.00 | 0.00 |
| Փոխառու արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| Հետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթեր | 0.00 | 0.00 |
| Այլ ժամանակավոր գործարքներ | 0.00 | 0.00 |
| **Ածանցյալ ֆինանսական ակտիվներ** | **396,674.65** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 0.00 | 0.00 |
| Այլ ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 396,674.65 | 0.00 |
| Այլ ֆինանսական գործիքներ | 0.00 | 0.00 |
| **Դեբիտորական պարտքեր** | | **43,702.34** |
| Արժութային ֆորվարդ գործարքներ | 0.00 | 0.00 |
| Այլ | 0.00 | 43,702.34 |
| **Ֆինանսական հաշիվներ** | **234,811,465.18** | **185,087,207.43** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 234,811,465.18 | 185,087,207.43 |
| **Ընդամենը ակտիվներ** | **4,244,974,797.03** | **3,830,780,997.98** |

**Հաշվապահական հաշվեկշիռ՝ առ 31 դեկտեմբերի 2022 թ. (շարունակություն)**

| *ՀՀ դրամով* | **Պարտավորություններ** **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **Պարտավորություններ** **2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| **Մասնակիցներին պատկանող ակտիվներ** | | |
| **Կապիտալ** | **4,033,646,393.48** | **3,574,612,699.69** |
| **Բաշխման ենթակա նախորդ տարվա կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ (ա)** | **0.00** | **0.00** |
| **Հաջորդ ժամանակաշրջաններ փոխանցված (ա)** | **0.00** | **0.00** |
| **Տարվա իրացված կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ (ա,բ)** | **(48,174,681.57)** | **47,044,141.60** |
| **Արդյունք (ա,բ)** | **254,455,703.88** | **204,731,283.91** |
| **Մասնակիցներին պատկանող զուտ միջոցներ (զուտ ակտիվներ)** | **4,239,927,415.79** | **3,826,388,125.20** |
| | | |
| **Ֆինանսական գործիքներ** | **0.00** | **0.00** |
| Ֆինանսական գործիքների փոխանցումներ | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 |
| Հետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթերով վճարման ենթակա գումարներ | 0.00 | 0.00 |
| Փոխառու արժեթղթերի գծով վերադարձման ենթակա գումարներ | 0.00 | 0.00 |
| Այլ ժամանակավոր գործարքներ | 0.00 | 0.00 |
| | | |
| **Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | **0.00** | **0.00** |
| Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 0.00 | 0.00 |
| Այլ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 0.00 | 0.00 |
| | | |
| **Կրեդիտորական պարտավորություններ** | **5,047,381.24** | **4,392,872.78** |
| Արժութային ֆորվարդ գործարքներ | 0.00 | 0.00 |
| Այլ պարտավորություններ | 5,047,381.24 | 4,392,872.78 |
| | | |
| **Ֆինանսական հաշիվներ** | **0.00** | **0.00** |
| Կարճաժամկետ վարկեր | 0.00 | 0.00 |
| Ստացված վարկեր | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **4,244,974,797.03** | **3,830,780,997.98** |

(ա) ներառյալ ճշգրտումները
(բ) հանած ֆինանսական տարվա ընթացքում վճարված միջանկյալ բաշխումները

Հաստատվել է Ղեկավարության կողմից 2023 թ. ապրիլի 19-ին:

**Ժան Մազեջյան**
Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի
գործադիր տնօրեն

**Արտահաշվեկշիռ` առ 31 դեկտեմբերի 2022 թ.**

| *ՅՅ դրամով* | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| **Յեջային գործառնություններ** | | |
| Պայմանագրեր կարգավորվող կամ համանման շուկաներում | 0.00 | 0.00 |
| Արտաբորսայական (OTC) պայմանագրեր | 47,887,000.00 | 0.00 |
| Արժութային սվոփ գործարքներ | 47,887,000.00 | 0.00 |
| Այլ պայմանագրային պարտավորություններ | 0.00 | 0.00 |
| | | |
| **Այլ գործառնություններ** | | |
| Պայմանագրեր կարգավորվող կամ համանման շուկաներում | 0.00 | 0.00 |
| Արտաբորսայական (OTC) պայմանագրեր | 0.00 | 0.00 |
| Այլ պայմանագրային պարտավորություններ | 0.00 | 0.00 |

Յաստատվել է Ղեկավարության կողմից 2023 թ. ապրիլի 19-ին:

**Ժան Մազեջյան**
Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի
գործադիր տնօրեն

**Եկամուտների և ծախսերի հաշվետվություն**
**2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| ***ՀՀ դրամով*** | **2022 թ.** | **2021 թ.** |
|---|---|---|
| **Եկամուտներ ֆինանսական գործառնությունների գծով** | | |
| Եկամուտներ ավանդներից և ֆինանսական հաշիվներից | 114,581,123.78 | 87,471,978.10 |
| Եկամուտներ բաժնետոմսերից և համանման արժեթղթերից | 0.00 | 0.00 |
| Եկամուտներ պարտատոմսերից և համանման արժեթղթերից | 157,773,464.13 | 125,738,429.87 |
| Եկամուտներ վարկային գործիքներից | 0.00 | 0.00 |
| Եկամուտներ արժեթղթերի ժամանակավոր ձեռքբերումից և օտարումից | 0.00 | 0.00 |
| Եկամուտներ ածանցյալ գործիքներից | 3,738,056.89 | 0.00 |
| Այլ ֆինանսական եկամուտներ | 7,177,712.05 | 7,113,693.21 |
| **Ընդամենը (1)** | **283,270,356.85** | **220,324,101.18** |
| | | |
| **Վճարներ ֆինանսական գործառնությունների գծով** | | |
| Վճարներ արժեթղթերի ժամանակավոր ձեռքբերման և օտարման գծով | 0.00 | 0.00 |
| Վճարներ ածանցյալ գործիքների գծով | 515,638.20 | 0.00 |
| Վճարներ ֆինանսական պարտավորությունների գծով | 52,279.63 | 154,139.08 |
| Այլ ֆինանսական վճարներ | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը (2)** | **567,917.83** | **154,139.08** |
| | | |
| **Զուտ եկամուտ ֆինանսական գործառնություններից (1 - 2)** | **282,702,439.02** | **220,169,962.10** |
| Այլ եկամուտ (3) | 0.00 | 0.00 |
| Կառավարման վճարներ և մաշվածության պահուստներ (4) | 52,163,888.26 | 45,823,236.41 |
| | | |
| **Ֆինանսական տարվա զուտ եկամուտ (Տ.214-17-1) (1-2+3-4)** | **230,538,550.76** | **174,346,725.69** |
| Հասույթի ճշգրտում (5) | 23,917,153.12 | 30,384,558.22 |
| Ֆինանսական տարվա ընթացքում վճարված զուտ եկամտի միջանկյալ բաշխում (6) | 0.00 | 0.00 |
| **Զուտ շահույթ (1 - 2 + 3 - 4 + 5 + 6)** | **254,455,703.88** | **204,731,283.91** |

Հաստատվել է Ղեկավարության կողմից 2023 թ. ապրիլի 19-ին:

**Ժան Մազեջյան**
Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի
գործադիր տնօրեն

## 1. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Այլընտրանքային զուտ կապիտալի 2014-1 կանոնակարգով (ANC Regulation) նախատեսված ձևաչափով:

Կիրառելի են հաշվապահական հաշվառման հետևյալ համընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝

- Արժանահավատ ներկայացում, համեմատականություն, գործունեության անընդհատություն,
- Բարեխիղճ գործունեություն և վստահելիություն,
- Ողջամտություն,
- Կիրառվող մեթոդների մեկ ժամանակաշրջանից մյուսը չփոփոխելը

Կայուն եկամտաբերությամբ արժեթղթերից հասույթը ճանաչվում է հաշվեգրման հիմունքով: Արժեթղթերի ձեռքբերումները և օտարումները ճանաչվում են ինքնարժեքով:

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտությամբ ներկայացված դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների նկատմամբ հաշվարկված տոկոսային դրույք՝ հաշվետու ամսաթվի դրությամբ (%): Հաշվետվություններում ներկայացված հաշվետու ժամանակաշրջանը 2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարին է:

Ֆոնդի կառավարիչն է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն: Ֆոնդի վարչարարությունը պատվիրակվել է «ԿԱՍԵԻՍ Ֆանդ ադմինիստրեյշն» բաժնետիրական ընկերությանը (CACEIS Fund Administration): Ֆոնդի պահառուն և մասնակիցների ռեեստրավարը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն է:

Ֆոնդը կենսաթոշակային ֆոնդ է, որը կառավարվում է ակտիվների անկախ պրոֆեսիոնալ կառավարիչների կողմից, մինչև գումարները վճարվում են կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցներին: Ֆոնդի մասնակիցները կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների սեփականատերերն են:

Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժութային ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ֆոնդի նպատակն է առավելագույնի հասցնել ակտիվների եկամտաբերությունը՝ ֆոնդի ակտիվների մինչև 50 տոկոսը ներդնելով բաժնային գործիքներում, բաժնային ֆոնդերում և բաժնային համարժեք գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամային շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի միջին հակվածությամբ:

**Ակտիվների գնահատման կանոնները.** ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են պատմական արժեքով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում իրենց ներկա արժեքով, որն իրենց վերջին հասանելի շուկայական արժեքն է, կամ շուկայի բացակայության դեպքում արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքի միջև տարբերությունները որոշվում են վերը նշված եղանակով և նրանց սկզբնական պատմական արժեքը ճանաչվում է հաշվետվություններում՝ որպես «գնահատումների տարբերություն»: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առքուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են վերը նշված եղանակով և այնուհետև փոխարկվում պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

**Ավանդներ և ֆինանսական հաշիվներ.** ավանդները գնահատվում են գծային մեթոդով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկերում կանխիկ միջոցները:

## 1. Յաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները (շարունակություն)

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են տվյալ օրվա շուկայի փակման դրույթյամբ գործող գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների կողմից ծանուցված փակման գներով: Փակման օրվա ընթացքում գործարքի բացակայության դեպքում արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցողի կողմից տրամադրված գնման և վաճառքի միջին գնով: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի գծով հաշվեգրված տոկոսը հաշվարկվում է մինչև ակտիվի գնահատման ամսաթիվը:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները, հաշվի առնելով վերջին էական գործարքներում օգտագործված գները:

**Պայմանագրային վարկային գործիքներ (արժեկտրոններ).** պայմանագրային վարկային գործիքները, որոնք ակտիվորեն առքուվաճառքի չեն ենթարկվում էական գումարներով, գնահատվում են ակտուարային սկզբունքով՝ ստորև նշված ամսաթվերով, գումարած թողարկողի առանձնահատուկ բնութագրերը ներկայացնող լրացումները:

- Մեկ տարի կամ պակաս ժամկետայնությամբ արժեկտրոնները գնահատվում են եվրոյի միջբանկային առաջարկի գնով (Euribor),
- Մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ արժեկտրոնները գնահատվում են միջնաժամկետ տոկոսակիր գանձապետական պարտատոմսերի գերիշխող փոխարժեքով կամ, ավելի երկարաժամկետ արժեկտրոնների համար (BTAN)՝ կարճաժամկետ կտրվածքով փոխարկելի գանձապետական պարտատոմսերի (OAT) փոխարժեքով,
- Երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ պայմանագրային վարկային գործիքները կարող են գնահատվել գծային մեթոդով:

Յայկական գանձապետական պարտատոմսերը գնահատվում են՝ օգտագործելով ՅՅ կենտրոնական բանկի յուրաքանչյուր օրվա համար հրապարակած շուկայական դրույքաչափը:

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (ՓԱՅՆԳ/UCITS).** UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով:

**Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով.** հետվաճառքի գործարքների ներքո պահվող արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում՝ «Վարկեր՝ փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց» տողում՝ պայմանագրում նշված գնով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսը:

Յետգնման գործարքների ներքո թողարկողին վաճառված արժեթղթերը հաշվառվում են գնման պորտֆելում իրենց ընթացիկ արժեքով: Յամապատասխան պարտավորությունը հաշվառվում է վաճառքի պորտֆելում՝ պայմանագրում նշված գնով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսը:

Փոխառությամբ տրված արժեթղթերը գնահատվում են իրենց ընթացիկ արժեքով և հաշվառվում «Վարկեր՝ փոխառությամբ տրամադրված արժեթղթերի դիմաց» տողում:

Փոխառնված արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում՝ «Փոխառնված արժեթղթեր» տողում՝ պայմանագրում նշված գնով, և պարտավորություններում՝ «Յետգնման գործարքների ներքո վաճառված արժեթղթերով վճարման ենթակա գումարներ» տողում՝ պայմանագրում նշված գնով, գումարած վճարվելիք հաշվեգրված տոկոսը:

## 1. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները (շարունակություն)

***Ածանցյալ գործիքներ***

**Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման ածանցյալ գործիքներ**

Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման ածանցյալ գործիքները գնահատվում են օրվա հաշվարկային գնով:

**Կարգավորվող շուկայում առքուվաճառքի չենթարկվող կամ համանման ածանցյալ գործիքներ**

**Սվոփեր.** փոխարժեքային սվոփերը և/կամ ֆորվարդային արժութային գործարքները գնահատվում են իրենց շուկայական արժեքով՝ շուկայում գործող տոկոսադրույքների (և/կամ փոխարժեքների) ապագա տոկոսային հոսքերի զեղչմամբ հաշվարկված գնով: Այս գինը ճշգրտվում է դեֆոլտի ռիսկը հաշվի առնելու համար:

Ինդեքսային սվոփերը գնահատվում են ակտուարական սկզբունքով՝ կոնտրագենտի կողմից տրամադրված փոխարժեքի հիման վրա:

Այլ սվոփերը գնահատվում են իրենց շուկայական արժեքով կամ ֆոնդի կառավարչի կողմից սահմանված եղանակով:

**Արտահաշվեկշռային պարտավորություններ.** ֆիքսված հեջային պայմանագրերը ներկայացվում են «արտահաշվեկշռային պարտավորություններ»-ում իրենց շուկայական արժեքով՝ պորտֆելում կիրառված փոխարժեքով: Պայմանական հեջավորման գործիքները փոխարկվում են իրենց համապատասխան համարժեքներով:

Սվոփ գործարքները հաշվառվում են անվանական արժեքով կամ դրան համարժեք արժեքով, եթե առկա չէ անվանական արժեք:

**Կառավարման վճարներ.** կառավարման վճարները հաշվարկվում են տարեկան 1.3%-ի չափով, ներառյալ կիրառելի բոլոր հարկերը ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա՝ ամենօրյա հիմունքով: Այս վճարները ներկայացվում են Ֆոնդի եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են Ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի վճարը և Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարը: Կառավարման վճարները չեն ներառում դիլինգի ծախսերը: Ֆինանսական հաշվետվություններում աուդիտի և երաշխիքային ֆոնդերի վճարները ներկայացվում են որպես կառավարման վճարների մաս:

**Զուտ շահույթի բաշխումը.** ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) ներառում է տոկոսների, պարտքի, պարգևավճարների, հատկացումների, շահաբաժինների ամբողջությունը, գումարած՝ կանխիկից ստացված եկամուտը, հանած կառավարման վճարները և ֆինանսական ծախսերը: Չբացահայտված կամ իրացված կապիտալի հավելաճից օգուտները կամ կապիտալի գծով վնասները չեն դիտարկվում որպես հասույթ, ինչպես նաև, որպես այդպիսին, չեն դիտարկվում թողարկման/մարման վճարները:

Բաշխման համար հասանելի գումարներն են՝ ժամանակաշրջանի զուտ շահույթը, գումարած հաջորդ ժամանակաշրջան փոխանցված միջոցները, հանած կամ գումարած տվյալ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հասույթի ճշգրտման հաշիվների մնացորդները:

***Ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայերի հավասարեցում***

**Հասույթի ճշգրտում.** բոլոր փայատերերը պետք է ստանան մեկ փայի դիմաց բաշխման ենթակա հավասարաչափ եկամուտ, անկախ փայի թողարկման ամսաթվից: «Հասույթի ճշգրտում» տողում ներկայացված ուղղիչ մեխանիզմի միջոցով չեզոքացվում է թողարկումների և մարումների ազդեցությունը մեկ փայի դիմաց ստացվող եկամտի վրա: Ակտիվի զուտ արժեքը հաշվարկելիս Ֆոնդը որոշում է բաշխման ենթակա եկամուտը: Թողարկումները կամ մարումները ազդեցություն չեն գործում փայերի կատարողականի վրա: Հասույթի ճշգրտման մեխանիզմն ապահովում է թողարկումների և մարումների չեզոքություն՝ մեկ փայի դիմաց բաշխման ենթակա եկամտի գծով:

## 1. Հաշվապահական հաշվառման վարման կանոնները և մեթոդները (շարունակություն)

**Օգուտներ և վնասներ.** ֆինանսական տարվա զուտ իրացված օգուտները (հանած կառավարման վճարներից և իրացված վնասներից) կհամալրեն նախորդ ֆինանսական տարիների միևնույն տեսակի իրացված օգուտները, եթե ֆոնդը բաշխած կամ կուտակած չլինի իր օգուտները, ինչպես նաև կհամալրի կամ կնվազեցնի իրացված օգուտների գծով հավասարեցնող հաշիվները:

Ֆոնդի ակտիվներից ձևավորված ողջ եկամուտը, որը ներառում է, բայց չի սահմանափակվում իրացված կապիտալի հավելաճով, կայուն եկամտաբերությամբ արժեթղթերի գծով տոկոսագումարների վճարումներով և այլնով, պետք է վերաներդրվի Ֆոնդում: Շահույթի բաշխում չի նախատեսվում:

**Փայերի բաժանորդագրում և մարում.** ֆոնդի փայերի թողարկումն ու մարումը կատարվում են թողարկման և մարման ամսաթվի դրությամբ յուրաքանչյուր փայի համար զուտ ակտիվների ամենավերջին հասանելի արժեքի հիման վրա: Փայերի թողարկման համար որևէ վճար կամ գումար չի գանձվում: Մարման վճարները կատարում է դիմողը, որոնց դրույքաչափերը տատանվում են 0-ից 3%՝ կախված մարման գործարքի տեսակից և սահմանվում են Ֆոնդի կանոններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում համապատասխան կիրառելի օրենսդրությամբ:

## 2. Զուտ ակտիվներում փոփոխություններ տարվա համար

| *ՅՅ դրամով* | **2022 թ.** | **2021 թ.** |
|---|---|---|
| **Զուտ ակտիվներ ֆինանսական տարվա սկզբում** | **3,826,388,125.20** | **3,093,289,609.08** |
| Թողարկումներ (ներառյալ ֆոնդի կողմից ստացված թողարկման վճարները) | 786,656,836.60 | 628,751,596.20 |
| Մարումներ (հանած ֆոնդի կողմից ստացված մարման վճարները) | (11,559,842.30) | (13,489,916.20) |
| Ավանդների և ֆինանսական գործիքների նկատմամբ իրացված կապիտալի հավելաճից օգուտներ | 15,766,607.69 | 37,765,120.29 |
| Ավանդների և ֆինանսական գործիքների նկատմամբ իրացված կապիտալի գծով վնասներ | (20,888,484.10) | (2,586,414.93) |
| Ածանցյալ գործիքների նկատմամբ իրացված կապիտալի հավելաճից օգուտներ | 12,001.91 | 0.00 |
| Ածանցյալ գործիքների նկատմամբ իրացված կապիտալի գծով վնասներ | 0.00 | 0.00 |
| Դիլինգի ծախսեր | (547,690.01) | (417,416.25) |
| Փոխարժեքային (վնաս) / օգուտ | (268,943,355.95) | (107,819,199.01) |
| **Գնահատումների տարբերություններում փոփոխություններ (ֆինանսական գործիքների գծով)** | **(380,734,092.31)** | **(16,548,020.33)** |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N | (119,979,805.76) | 260,754,286.55 |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N-1 | (260,754,286.55) | (244,206,266.22) |
| **Գնահատումների տարբերություններում փոփոխություններ (ածանցյալ գործիքների գծով)** | **(284,072.41)** | **0.00** |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N | (284,072.41) | 0.00 |
| Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N-1 | 0.00 | 0.00 |
| Նախորդ ֆինանսական տարվանից կուտակված կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ | 0.00 | 0.00 |
| Կապիտալի հավելաճից զուտ օգուտներին և կապիտալի գծով զուտ վնասներին բաշխում նախորդ ֆինանսական տարվանից | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական տարվա զուտ եկամուտ | 230,538,550.76 | 174,346,725.69 |
| Զուտ եկամտին բաշխման ենթակա տարրերի հատկացում | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական տարվա ընթացքում վճարված զուտ եկամտի միջանկյալ բաշխումներ | 0.00 | 0.00 |
| Այլ հոդվածներ | 63,522,820.71(*) | 0.00 |
| **Զուտ ակտիվներ ֆինանսական տարվա վերջում** | **4,239,927,415.79** | **3,826,388,125.20** |

(*) 01.01.2021թ. ֆոնդը կանխիկի վրա հիմնված հաշվառումից անցել է հաշվեգրման հիմունքներով հաշվառման, ինչը պահանջում էր 2021 թվականի հաշիվների ճշգրտում: Ճշգրտումները գրանցվել են 2021 թվականին «Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N»-ում՝ «Այլ հոդվածներ»-ի փոխարեն: Ընթացիկ և հետագա տարիների համար ճշգրիտ ֆինանսական հաշվետվություններ ապահովելու համար ճշգրտումը 2022 թվականի դրությամբ վերադասակարգվել է «Գնահատումների տարբերություններ, ժամանակահատված N»-ից «Այլ հոդվածներ»: Տվյալ վերադասակարգումը որևէ ազդեցություն չունի ֆոնդի զուտ ակտիվների արժեքի (ԶԱԱ) վրա:

## 3. Լրացուցիչ մանրամասներ

### 3.1 Ֆինանսական գործիքների ներկայացումն՝ ըստ իրավական կամ առևտրային տեսակի

| *ՀՀ դրամով* | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **%** |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| **Պարտատոմսեր և համանման արժեթղթեր** | | |
| Կարգավորվող կամ համանման շուկայում առքուվաճառքի ենթարկվող ֆիքսված տոկոսադրույքով պարտատոմսեր | 1,681,023,532.90 | 39.64 |
| **Ընդամենը պարտատոմսեր և համանման արժեթղթեր** | **1,681,023,532.90** | **39.64** |
| **Վարկային գործիքներ** | | |
| Գանձապետական պարտատոմսեր | | |
| **Ընդամենը վարկային գործիքներ** | **0.00** | **0.00** |
| **Պարտավորություններ** | | |
| Ֆինանսական գործիքների փոխանցման գործարքներ | | |
| **Ընդամենը ֆինանսական գործիքների փոխանցման գործարքներ** | **0.00** | **0.00** |
| **Արտահաշվեկշռային պարտավորություններ** | | |
| **Հեջավորման գործիքներ** | **47,887,000.00** | **1.13** |
| Արտարժույթի փոխարժեք (արժութային սվոփեր) | 47,887,000.00 | 1.13 |
| **Ընդամենը հեջավորման գործիքներ** | **0.00** | **0.00** |
| **Այլ գործառնություններ** | **0.00** | **0.00** |
| **Ընդամենը այլ գործառնություններ** | **0.00** | **0.00** |

### 3.2 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումն՝ ըստ տոկոսի տեսակի

| | | | | | | | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՀՀ դրամով* | **Ֆիքսված տոկոսադրույքով** | **%** | **Փոփոխական տոկոսադրույքով** | **%** | **Վերանայման ենթակա տոկոսադրույքով** | **%** | **Այլ** | **%** |
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Ավանդներ | 1,132,746,246.58 | 26.72 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտատոմսեր և համանման արժեթղթեր | 1,681,023,532.90 | 39.64 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վարկային գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 133,999,936.79 | 3.16 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 100,811,528.39 | 2.38 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Արտահաշվեկշռային պարտավորություններ** | | | | | | | | |
| Հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Այլ գործառնություններ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

«Այլ» ֆինանսական հաշիվները բաղկացած են Քլիրսթրիմ Բանկի հաշիվներից, որոնցից չի առաջանում տոկոսային եկամուտ:

## 3.3 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումը՝ ըստ ժամկետայնության

| *ՀՀ դրամով* | Մինչև 3 ամիս | % | 3 ամիս – 1 տարի | % | 1 - 3 տարի | % | 3 - 5 տարի | % | 2022-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ավելի քան 5 տարի | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | | | | | | | | |
| Ավանդներ | 217,511,232.87 | 5.13 | 722,358,643.84 | 17.04 | 192,876,369.87 | 4.55 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտատոմսեր և համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 | 98,604,453.94 | 2.33 | 692,977,766.56 | 16.34 | 275,129,376.98 | 6.49 | 614,311,935.42 | 14.49 |
| Վարկային գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 234,811,465.18 | 5.54 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Պարտավորություններ** | | | | | | | | | | |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Արտահաշվե-կշռային պարտավոր ու-թյուններ** | | | | | | | | | | |
| Հեջավորման գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Այլ գործառություններ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

## 3.4 Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների ներկայացումը՝ ըստ ցուցակման կամ գնահատման արժույթի

| | | | | | 2022-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԱՄՆ դոլար** | | **Եվրո** | | **Այլ արտարժույթ** | |
| *ՀՀ դրամով* | **Գումարը** | **%** | **Գումարը** | **%** | **Գումարը** | **%** |
| **Ակտիվներ** | | | | | | |
| Ավանդներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Բաժնետոմսեր և համանման արժեթղթեր | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտատոմսեր և համանման արժեթղթեր | 98,023,192.38 | 2.31 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Վարկային գործիքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Փայեր՝ փոխադարձ ներդրումային ֆոնդերում | 1,079,852,951.22 | 25.47 | 116,143,926.50 | 2.74 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Դեբիտորական պարտք | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 100,535,695.99 | 2.37 | 275,832.40 | 0.01 | 0.00 | 0.00 |
| **Պարտավորություններ** | | | | | | |
| Ֆինանսական գործիքների փոխանցման գործարքներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Պարտավորություններ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Ֆինանսական հաշիվներ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| **Արտահաշվեկշռային պարտավորություններ** | | | | | | |
| Հեջավորման գործիքներ | 47,887,000.00 | 1.13 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| Այլ գործառնություններ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

## 3.5 Դեբիտորական և կրեդիտորական պարտքի ներկայացումն՝ ըստ տեսակի

| *ՀՀ դրամով* | **2022 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|
| **Դեբիտորական պարտք** | |
| Այլ դեբիտորական պարտքեր | 0.00 |
| **Ընդամենը դեբիտորական պարտք** | **0.00** |
| **Կրեդիտորական պարտք** | |
| Կառավարման վճարներ | 5,047,381.24 |
| Այլ կրեդիտորական պարտք | 0.00 |
| **Ընդամենը կրեդիտորական պարտք** | **5,047,381.24** |

## 3.6 Բաժնետերերի ֆոնդեր

### Թողարկված կամ մարված փայերի քանակ

| *ՀՀ դրամով* | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | |
|---|---|---|
| | **Փայեր** | **Արժեք** |
| Ֆինանսական տարվա ընթացքում թողարկված փայեր | 430,192.003305 | 786,656,836.60 |
| Ֆինանսական տարվա ընթացքում մարված փայեր | (6,309.312786) | (11,559,842.30) |
| **Զուտ թողարկումներ/մարումներ** | **423,882.690519** | **775,096,994.30** |

### Թողարկման և/կամ մարման վճարներ

| *ՀՀ դրամով* | **2022 թ.** |
|---|---|
| | **Արժեք** |
| **Ընդամենը ստացված թողարկման և/կամ մարման վճարներ** | **0.00** |
| Ընդամենը ստացված թողարկման վճարներ | 0.00 |
| Ընդամենը ստացված մարման վճարներ | 0.00 |

## 3.7 Կառավարման վճարներ

| *ՀՀ դրամով* | **2022 թ.** |
|---|---|
| Միջնորդավճար անդերրայթինգի գծով | 0.00 |
| Կառավարման ֆիքսված վճար | 52,163,888.26 |
| Կառավարման ծախսերի տոկոսը | 1.3 |
| Փոփոխական կառավարման ծախսեր | 0.00 |
| Միջնորդ գործակալի հատուցում | 0.00 |

## 3.8 Ստանձնած և տրամադրված պարտավորություններ

Ֆոնդի կողմից ստացված երաշխիքներ՝ չկան:

Այլ ստանձնած և/կամ տրամադրված հանձնառություններ՝ 100,000.00 ԱՄՆ դոլար հանձնառություն տրված ԵՄ-Հայաստան ՓՄՁ ֆոնդին, որից 19,316.74 ԱՄՆ դոլարը արդեն տրամադրվել է և ներառվել է ֆոնդի ակտիվների մեջ 16,889.04 ԱՄՆ դոլարի չափով՝ վերագնահատումից հետո:

## 3.9 Այլ

### Ժամանակավորապես ձեռք բերված արժեթղթերի գնանշված շուկայական արժեքը

| *ՀՀ դրամով* | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|
| Հետվաճառքի գործարքների ներքո պահվող արժեթղթեր | 0.00 |
| Փոխառու արժեթղթեր | 0.00 |

## 3.9 Այլ (շարունակություն)

**Գրավադրված արժեթղթերի գնանշված շուկայական արժեքը**

| *ՀՀ դրամով* | 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|
| Գրավադրված, սակայն չվերադասակարգված ֆինանսական գործիքներ | 0.00 |
| Որպես գրավ ստացված, սակայն հաշվեկշռում չճանաչված ֆինանսական գործիքներ | 0.00 |

**Ֆոնդի կողմից պահվող խմբային ֆինանսական գործիքներ**

| *ՀՀ դրամով* | ISIN կոդ | Արժեթղթի անվանումը | 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Բաժնետոմսեր | | | |
| Ավանդներ | | ԱԿԲԱ Բանկ, 09/02/2024 | 152,232,534.25 |
| Պարտատոմսեր | | | |
| Արժեկտրոններ | | | |
| Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումներ փոխանցելի արժեթղթերում / UCITS | LU0557861514 | AMUNDI FUNDS GLOBAL AGGREGATE BOND O USD C | 50,500,146.78 |
| | LU0557865341 | AMUNDI INDEX MSCI EMU - OE | 55,410,139.65 |
| | LU0557865424 | AMUNDI INDEX MSCI EUROPE - OE | 60,733,786.85 |
| | LU0996182050 | AMUNDI INDEX MSCI WORLD - OU | 404,458,974.87 |
| | LU1162497744 | AMUNDI FUNDS PIONEER US CORPORATE BOND O USD C | 74,275,513.40 |

## 3.10 Բաշխման ենթակա միջոցների հատկացման աղյուսակ

**Շահույթին վերաբերող միջոցների բաշխման ենթակա մասնաբաժնի հատկացման աղյուսակ**

| *ՀՀ դրամով* | 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Դեռևս չհատկացված միջոցներ** | | |
| Հաջորդ ժամանակաշրջաններ փոխանցված | 0.00 | 0.00 |
| Շահույթ | 254,455,703.88 | 204,731,283.91 |
| **Ընդամենը** | **254,455,703.88** | **204,731,283.91** |

| *ՀՀ դրամով* | 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Հատկացում** | | |
| Բաշխում | 0.00 | 0.00 |
| Հաջորդ ժամանակաշրջաններ փոխանցված | 0.00 | 0.00 |
| Կապիտալացված | 254,455,703.88 | 204,731,283.91 |
| **Ընդամենը** | **254,455,703.88** | **204,731,283.91** |

## 3.10 Բաշխման ենթակա միջոցների հատկացման աղյուսակ (շարունակություն)

### Կապիտալի հավելաճից օգուտներին կամ կապիտալի գծով վնասներին վերաբերող միջոցների բաշխման ենթակա մասնաբաժնի հատկացման աղյուսակ

| *ՀՀ դրամով* | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| **Դեռևս չհատկացված միջոցներ** | | |
| Նախորդ ֆինանսական տարվանից կուտակված կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ | 0.00 | 0.00 |
| Ընթացիկ ֆինանսական տարվա կապիտալի հավելաճից զուտ իրացված օգուտներ և կապիտալի գծով զուտ իրացված վնասներ | (48,174,681.57) | 47,044,141.60 |
| Կապիտալի հավելաճից զուտ օգուտներին և կապիտալի գծով զուտ վնասներին բաշխման ենթակա տարրերի հատկացում | 0.00 | 0.00 |
| **Ընդամենը** | **(48,174,681.57)** | **47,044,141.60** |

| *ՀՀ դրամով* | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|
| **Հատկացում** | | |
| Բաշխում | 0.00 | 0.00 |
| Բաշխման ենթակա՝ կապիտալի հավելաճից զուտ օգուտներ և կապիտալի գծով զուտ վնասներ | 0.00 | 0.00 |
| Կապիտալացված | (48,174,681.57) | 47,044,141.60 |
| **Ընդամենը** | **(48,174,681.57)** | **47,044,141.60** |

## 3.11 Շահույթի (վնասի) և այլ բնորոշ հատկանիշների ներկայացման աղյուսակ՝ վերջին հինգ ֆինանսական ժամանակաշրջանների համար

| | **2018-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2019-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2020-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2021-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2022-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
|---|---|---|---|---|---|
| **Գլոբալ զուտ ակտիվներ ՀՀ դրամով** | **1,720,185,261.77** | **2,335,339,841.85** | **3,093,289,609.08** | **3,826,388,125.20** | **4,239,927,415.79** |
| Զուտ ակտիվներ ՀՀ դրամով | 1,720,185,261.77 | 2,335,339,841.85 | 3,093,289,609.08 | 3,826,388,125.20 | 4,239,927,415.79 |
| Բաժնետոմսերի/ փայերի թիվը | 1,122,411.222620 | 1,361,427.774930 | 1,630,620.484421 | 1,947,841.893991 | 2,371,724.584510 |
| Բաժնետոմսերին /փայերին բաժին ընկնող զուտ ակտիվների արժեք ՀՀ դրամով | 1,532.5802 | 1,715.3608 | 1,897.0016 | 1,964.4244 | 1,787.6981 |
| Մեկ փայի գծով կուտակված կապիտալի հավելաճից օգուտներ և կապիտալի գծով վնասներ ՀՀ դրամով | 3.86 | 0.05 | 19.60 | 24.15 | (20.31) |
| Մեկ փայի գծով կուտակված զուտ իրացված շահույթ ՀՀ դրամով | 68.08 | 101.25 | 100.11 | 105.11 | 107.29 |

## 3.12 Պորտֆելի ցուցակումը

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** |
| **Արժեթղթի անվանումը** | **ISIN** | **Արժույթ** | **Քանակ** | **Շուկայական արժեք** | **%** |
| **Ավանդներ** | | | | | |
| **Ավանդներ ՅՅ բանկերում 10.2%-12.5%, 27/02/2023-15/11/2024** | | **ՅՅ ԴՐԱՄ** | **1,105,000** | **1,132,746,246.58** | **26.72** |
| **ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԵՎ ՅԱՄԱՆՄԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ** | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման գործիքներ** | | | | | |
| **Յայաստան** | | | | | |
| ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ 10.0% 15/05/2023 | AMASHBB2EER4 | ՅՅ ԴՐԱՄ | 15,000,000 | 15,195,752.25 | 0.36 |
| ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ ՓԲԸ 9.75% 20/04/2024 | AMCOVSB2CER3 | ՅՅ ԴՐԱՄ | 20,000,000 | 20,231,190.00 | 0.48 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.0% 29/10/2023 | AMGB1029A235 | ՅՅ ԴՐԱՄ | 13,250,000 | 13,298,273.91 | 0.31 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 11.0% 29/10/2025 | AMGB1029A250 | ՅՅ ԴՐԱՄ | 55,328,000 | 55,149,502.02 | 1.30 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.0% 29/10/2027 | AMGB1029A276 | ՅՅ ԴՐԱՄ | 27,080,000 | 25,617,857.32 | 0.60 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.0% 29/10/2029 | AMGB1029A292 | ՅՅ ԴՐԱՄ | 74,400,000 | 65,348,494.96 | 1.54 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8.0% 29/10/2031 | AMGB1129A316 | ՅՅ ԴՐԱՄ | 317,600,000 | 253,920,268.16 | 5.99 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 13.0% 17/02/2032 | AMGB20172327 | ՅՅ ԴՐԱՄ | 84,587,000 | 93,240,506.74 | 2.20 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 13.0% 29/10/2036 | AMGB2029A366 | ՅՅ ԴՐԱՄ | 115,633,000 | 125,847,056.34 | 2.97 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 12.5% 29/10/2037 | AMGB2029A374 | ՅՅ ԴՐԱՄ | 72,000,000 | 75,955,609.22 | 1.79 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 6.5% 29/04/2023 | AMGN36294236 | ՅՅ ԴՐԱՄ | 20,000,000 | 19,891,939.88 | 0.47 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 6.5% 29/04/2024 | AMGN36294244 | ՅՅ ԴՐԱՄ | 140,000,000 | 132,673,146.62 | 3.13 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.25% 29/04/2025 | AMGN36294251 | ՅՅ ԴՐԱՄ | 96,000,000 | 92,455,565.47 | 2.18 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 7.0% 29/04/2025 | AMGN60294250 | ՅՅ ԴՐԱՄ | 83,500,000 | 76,375,419.28 | 1.80 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 7.0% 29/04/2026 | AMGN60294268 | ՅՅ ԴՐԱՄ | 214,000,000 | 188,134,811.25 | 4.44 |
| ՅՅ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.4% 29/04/2027 | AMGN60294276 | ՅՅ ԴՐԱՄ | 48,000,000 | 44,688,931.30 | 1.05 |
| ՅԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ 9.75% 03/09/2023 | AMHEZBB28ER3 | ՅՅ ԴՐԱՄ | 40,000,000 | 41,045,682.80 | 0.97 |
| Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ 10.0% 15/04/2025 | AMNMCCB2MER2 | ՅՅ ԴՐԱՄ | 82,000,000 | 82,081,245.60 | 1.94 |
| Ազգային հիփոթեքային ընկերություն ՓԲԸ 12.0% 06/12/2025 | AMNMCCB2NER0 | ՅՅ ԴՐԱՄ | 120,000,000 | 121,736,716.80 | 2.87 |
| ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ 11.5% 24/05/2023 | AMSWISB27ER4 | ՅՅ ԴՐԱՄ | 9,000,000 | 9,172,805.10 | 0.22 |
| ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ 6.0% 01/06/2026 | AMSWISB2DER0 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 40,000 | 16,687,777.11 | 0.39 |
| ՅՅ Պետական Միջազգային Պարտատոմսեր 7.15% 26/03/25 | XS1207654853 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 200,000 | 81,335,415.27 | 1.92 |
| Fast Credit Capital UCO CJSC 11.5% 13/07/2024 | AMFSCRB25ER8 | ՅՅ ԴՐԱՄ | 30,000,000 | 30,939,565.50 | 0.73 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՅԱՅԱՍՏԱՆ** | | | | **1,681,023,532.90** | **39.64** |
| **Ընդամենը կարգավորվող շուկայում առքուվաճառքի ենթարկվող կամ համանման արժեթղթեր** | | | | **1,681,023,532.90** | **39.64** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԵՎ ՅԱՄԱՆՄԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ** | | | | **1,681,023,532.90** | **39.64** |

## 3.12 Պորտֆելի ցուցակումը (շարունակություն)

| | | | | 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | |
|---|---|---|---|---|---|
| Արժեթղթի անվանումը | ISIN | Արժույթ | Քանակ | Շուկայական արժեք | % |
| **ՀԱՎԱՔԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ** | | | | | |
| **Ընդհանուր նշանակության հավաքական ներդրումային գործիքներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր և դրանց համարժեքներ այլ երկրներում** | | | | | |
| **ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | | |
| AMUNDI FUNDS GLOBAL AGGREGATE BOND O USD C | LU0557861514 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 90 | 50,500,146.78 | 1.19 |
| AMUNDI INDEX MSCI EMU - OE | LU0557865341 | ԵՎՐՈ | 69 | 55,410,139.65 | 1.31 |
| AMUNDI INDEX MSCI EUROPE - OE | LU0557865424 | ԵՎՐՈ | 70 | 60,733,786.85 | 1.43 |
| AMUNDI INDEX MSCI WORLD - OU | LU0996182050 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 560 | 404,458,974.87 | 9.54 |
| AMUNDI FUNDS PIONEER US CORPORATE BOND O USD C | LU1162497744 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 150 | 74,275,513.40 | 1.75 |
| **Ընդամենը ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | **645,378,561.55** | **15.22** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ընդհանուր նշանակության հավաքական ներդրումներ փոխանցելի արժեթղթերում (UCITS) և ոչ պրոֆեսիոնալ ներդրողների համար նախատեսված այլընտրանքային ներդրումային ֆոնդեր այլ երկրներում** | | | | **645,378,561.55** | **15.22** |
| **Այլ պրոֆեսիոնալ ներդրումային ֆոնդեր և համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ** | | | | | |
| **ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | | |
| EU-Armenia SME Fund SCSp | – | ԱՄՆ ԴՈԼԱՐ | – | 6,647,019.39 | 0.16 |
| **Ընդամենը ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ** | | | | **6,647,019.39** | **0.16** |
| **Ընդամենը Այլ պրոֆեսիոնալ ներդրումային ֆոնդեր և դրանց համարժեքներ ԵՄ այլ անդամ երկրներում և ցուցակված արժեթղթավորման գործակալություններ** | | | | | |
| **ԱՅԼ ՈՉ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | |
| **ԱՄՆ** | | | | | |
| ISHARES S AND P 500 INDEX FUND | US4642872000 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 583 | 88,152,555.29 | 2.08 |
| MSCI EMERGING MARKETS INDEX FD | US4642872349 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 6,500 | 97,120,205.05 | 2.29 |
| ISHARES TRUST BARCLAYS 20+ | US4642874329 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 900 | 35,160,882.17 | 0.83 |
| ISHARES 7 10 YR | US4642874402 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 1,300 | 48,994,895.04 | 1.16 |
| ISHARES 0-5 YEAR TIPS BOND E | US46429B7477 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2,500 | 95,374,702.45 | 2.25 |
| ISHARES MSCI JAPAN ETF | US46434G8226 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 3,183 | 68,524,511.20 | 1.62 |
| Vanguard S&P 500 ETF | US9229083632 | ԱՄՆ ԴՈԼԱՐ | 800 | 110,643,545.58 | 2.61 |
| **Ընդամենը ԱՄՆ** | | | | **543,971,296.78** | **12.83** |
| **Ընդամենը այլ ոչ եվրոպական կազմակերպություններ** | | | | **543,971,296.78** | **12.83** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ Հավաքական ներդրումային գործիքներ** | | | | **1,195,996,877.72** | **28.21** |

## 3.12 Պորտֆելի ցուցակումը (շարունակություն)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | **2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | |
| **Արժեթղթի անվանումը** | **ISIN** | **Արժույթ** | **Քանակ** | **Շուկայական արժեք** | **%** |
| **Ածանցյալ ֆինանսական ակտիվներ** | | | | | |
| **Այլ ածանցյալ ֆինանսական գործիքներ** | | | | | |
| **Արժութային սվոփեր** | | | | | |
| Սվոփ 2026-02 | | | | (47,844,967.32) | (1.13) |
| Սվոփ 2026-02 | | | | 48,241,641.97 | 1.14 |
| **Ընդամենը արժութային սվոփեր** | | | | **396,674.65** | **0.01** |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ** | | | | **396,674.65** | **0.01** |
| **Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ** | | | | **396,674.65** | **0.01** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | **(5,047,381.24)** | **(0.12)** |
| **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ** | | | | **234,811,465.18** | **5.54** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | **4,239,927,415.79** | **100.00** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Հ ավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ** | | **ՀՀ ԴՐԱՄ** | **2,371,724.58** | **1,787.70** |